ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Համառոտ տեղեկատվություն «Հայկական խաղող և գինի» գրքի վերաբերյալ

Գրքի կարևորությունը

Հնագույն ժամանակներից ի վեր Հայաստանը հայտնի է խաղողի բազմատեսակ սորտերի հարստությամբ և գինեգործության եզակի մշակույթով: Այսօր էլ Հայաստանում առկա են խաղողի՝ գենետիկական անգնահատելի ռեսուրսներ և ներուժ ունեցող բազմաթիվ աբորիգեն սորտեր, որոնք, ենթադրաբար, ձևավորվել են երկարամյա բնական հիբրիդացիայի, մուտացիաների և սելեկցիայի արդյունքում: Սակայն այս մասին քիչ բան է հայտնի, քանի որ տեղեկատվության միակ աղբյուրը Հայկական ԽՍՀ ամպելոգրաֆիան և ազգագրական նյութերն են: Մյուս կողմից, աբորիգեն սորտերի միայն 10%-ն է պահպանվում հայկական ամպելոգրաֆիական կոլեկցիոն և մասնավոր այգիներում: Ուստի, ունենալով խաղողագործության և գինեգործության երկարատև պատմական ավանդույթ և կարևորելով գինու արտադրությունը Հայաստանում՝ անհրաժեշտություն կա բարձրացնելու հասարակության տեղեկացվածության մակարդակը գոյություն ունեցող և անուշադրության մատնված աբորիգեն սորտերի, խաղողագործության և գինեգործության ավանդական եղանակների վերաբերյալ:

Հենց այս նպատակով 2015 թվականին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարում Հարավային Կովկասում» (ԿԻԿ) ծրագիրը համախմբեց տարբեր ոլորտների հետազոտողների՝ կենսաբանների, հնագետների, ազգագրագետների և այլ գիտնականների, ինչպես նաև արհեստավարժ գինեգործների՝ հայկական խաղողի և գինու վերաբերյալ առկա տեղեկությունը հավաքագրելու, վերլուծելու և մեկ աշխատության մեջ ամփոփելու նպատակով: 2017թ-ի ավարտին հրատարակվեց խաղողագործության ու գինեգործության ծագումնաբանության և պատմության, խաղողի սորտերի ու կլոնների բազմազանության, հայկական խաղողի և գինու մշակույթի վերաբերյալ համապարփակ աշխատություն:

Գրքի բովանդակությունը

Խաղողագործությունն ու գինեգործությունը ներկայացնում են գիտության և արվեստի, ավանդույթի և մշակույթի նուրբ խառնուրդ, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նախ և առաջ ծանոթանալ այն վայրերի ավանդություններին ու մշակույթին, որտեղ խաղողի աբորիգեն սորտերի ապշեցուցիչ բազմազանությունը եզակի գինիներ արտադրելու հնարավորություն է տալիս: Ուստի, զուգակցելով հայկական խաղողի և գինու մշակութային ու կենսաբանական

առանձնահատկությունները՝ «Հայկական խաղող և գինի»-ին մանրամասն տեղեկություն է հաղորդում հետևյալ թեմաների վերաբերյալ՝

- խաղողի տեսակների ծագումն ու բազմազանության կարևորությունը Հայաստանում,
- խաղողագործության և գինեգործության վաղ հնէաբանական ապացույցները հին և միջնադարյան Հայաստանում,
- խաղողագործության և գինեգործության էվոլյուցիան, աբորիգեն խաղողների սորտերն ու դրանցից ստացված գինիները,
- անուշադրության մատնված աբորիգեն սորտերի հետ կապված առկա վտանգները,
- գինեգործության արդի միտումները,
- խաղողի մշակման և գինեգործության հետագա հնարավորությունները,
- խաղողի գենետիկական պաշարների արդյունավետ պահպանման և կայուն օգտագործման արդի մոտեցումները:

Գրքի արժեքը և հասանելիությունը

Գիրքը հասանելի կլինի Երևանի գրախանութներում 38,000 ՀՀ դրամ արժողությամբ և Amazon և eBay ինտերնետային խանութներում՝ «Հայկական խաղող և գինի» որոնմամբ: Հարկ է նշել, որ գրքի վաճառքից ստացված ողջ հասույթը ուղղվելու է Հայաստանում խաղողի աբորիգեն և վտանգված գինեմետ սորտերի ուսումնասիրությանը, կայուն պահպանությանը և օգտագործմանը:

Կոնտակտային տվյալներ՝

Գրքի նախաձեռնություն, զարգացում և տպագրություն

«Կենսաբազմազանության ինտեգրված կառավարում Հարավային Կովկասում» (ԿԻԿ) ծրագիր, որն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից

Կոնտ. անձ՝ Աստղիկ Դանիելյան
Հեռ՝ +374 (0)91 001 165
Էլ.հասցե՝ astghik.danielyan@giz.de

Գրքի առաջմղում և վաճառք՝

Երիտասարդ գինեգործների միություն՝ աջակցությամբ Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի

Կոնտ. անձ՝ Սիլվա Աթոյան
Հեռ՝ +374 (0)55 202 712
Էլ.հասցե՝ silva@icare.am

Գրքի հետագա օգտագործման իրավունք՝

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ

Կոնտ. անձ՝ Զարուհի Մուրադյան
Հեռ՝ +374 (0) 60 655 885
Էլ.հասցե՝ info@vwfa.am